

**5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
**5.3. 77 տարածքի 2003թ. նոյեմբերի հիդրոօդերևութաբանական**  
**պայմանների բնութագիրը**

Ըստ 77 բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2003թ. նոյեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը նորմային մոտ է եղել՝ փոքր-ինչ բացասական, տեղ-տեղ նաև դրական շեղումով: Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են նոյեմբերի 4-12-ին և 28-30-ին, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով:

Առավելագույն ջերմաստիճան գրանցվել է Սյունիքում, Արարատյան դաշտում, Տավուշում, Արցախում և Լոռիում՝ +16 +22°C, լեռնային շրջաններում՝ +10 +15°C:

Ամսվա մնացած օրերին օդի միջին ջերմաստիճանը մոտ է եղել նորմային և ցածր 2-4 աստիճանով: Ամենացածր ջերմաստիճանները գրանցվել են ամսի 14-ի, 15-ի, 23-ի և 24-ի գիշերները, երբ լեռնային շրջաններում և Լոռիում այն հասել է -7 -10°C (Մասրիկում՝ -17°C), նախալեռնային շրջաններում՝ -5 -8°C, Արարատյան դաշտում, Սյունիքի և Տավուշի հովտային շրջաններում՝ -1 -5°C:

Ամսական տեղումների քանակը նորմայից ավել է եղել (բացառությամբ Սյունիքի բարձրադիր գոտու, որտեղ այն կազմել է նորմայի 65%-ը) և կազմել նրա 150-200%-ը (Արտաշատում, Աշտարակում և Սիսիանում՝ 235-290%-ը, ք.Երևանի Արաբկիր համայնքում՝ 318%-ը): Առատ տեղումներ են դիտվել հատկապես ամսի 9-11-ին, լեռնային շրջաններում առաջացել է մինչև 22 սմ ձյան ծածկ (Ջերմուկում՝ 33 սմ): Տեղումների առավելագույն քանակը գրանցվել է Կոտայքում և Արագածոտնում՝ 55-75 մմ, Շիրակում, Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Վայոց ձորում և Երևանում այն կազմել է 38-48 մմ: Տաշիրում մեկ գիշերվա ընթացքում դիտվել է 29 մմ տեղումներ, որը նոյեմբեր ամսվա նորման է:

Նոյեմբեր ամսվա ընթացքում Լոռիում, Գեղարքունիքում և Արագածոտնի նախալեռներում դիտվել է քամու ուժգնացում: Քամու արագությունը հասել է 15 մ/վրկ, պոռթկումները՝ 18-20 մ/վրկ:

Նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում լեռնային առանձին շրջաններում պահպանվել է ձյան ծածկը, առավելագույն բարձրությունը Ջերմուկում կազմել է 15 սմ, Կոտայքում, Գեղարքունիքում, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ 1-5 սմ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտավորապես 90-120%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 2 սմ-ով և 2003թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1897.28 մ, որը 2002թ. նույն օրվա համեմատությամբ բարձր է 47 սմ-ով: Սևանա լճից ջրի բացթողումների ամսական ծավալը կազմել է 4.996 մլն. խոր. մ:

**ՀՀ ազգային վիճակագրական**  
**ծառայության նախագահ**

**Ս.Մնացականյան**